1293. Թորոս թագապահ, եղբայր Հեթմոյ, որդի Բ Լեւոնի. † 1298 : Սորա կինն է Մարգարիտ դուստր Հիւկ թագաւորի Կիպրոսի:

1296. Սմբատ, որդի Բ Լեւոնի. կին՝ Զապել դուստր Կիայ կոմսի Յոպպէի:

1298. Կոստանդին Ա թագապահ որդի Բ Լեւոնի:

1301. Լեւոն Գ, որդի Թորոսի որդւոյ Բ Լեւոնի. † 1307, նոյեմբ. 17: Կին՝ Ագնէս դուստր Զապլունի հօրքեռ իւրոյ:

1308. Օշին, որդի Բ Լեւոնի. † 1320, յուլ. 20: Առաջին կին՝ Զապել Բ, դուստր Հեթմոյ Պատմչի († 1311, մայիս). երկրորդ կին՝ Յովհաննա, դուստր Փիլիպպոսի իշխանի Տարենտայ, կայսր անուանելոյ Արեւելից:

1320. Լեւոն Դ, որդի Օշնի եւ Զապելի. † 1342, օգոստ. 28: Կին առաջին՝ Զապել, դուստր Օշնի Պայլի, երկրորդ՝ Ելէոնորա կամ Կոստանդիա, դուստր Փրետրիկայ թագաւորի Սիկիլիոյ, այրի մնացեալ յԵնրիկոսէ թագաւորէ Կիպրոսի:

1342. Ճուան թագապահ, որդի Զապլունի դստեր Բ Լեւոնի եւ Ամաւրեայ արքայեղբօր Կիպրոսի:

1342. Կի կամ Կիտ, երէց եղբայր Ճուանի. † 1344, նոյեմբ. 17: Կին Ա. Ա. դուստր Սիր Կիանի յոյն իշխանի:

1345. Կոստանդին Բ, որդի Պաղտինի մարաջախտի եւ Մարիւնի դստեր Բ Սմբատայ գունդստապլի. † 1363. – կին՝ Մարիամ դուստր Օշնի Պայլի եւ Յովհաննայ այրւոյ Օշնի թագաւորի:

1363-5. Շփոթք եւ բռնաբարութիւնք. ըստ ոմանց Լեւոն ոմն կորզէ զթագն, այլ խոտեալ ’ իբաց մերժի[255]:– Պեմունդ՝ անդրանիկ Ճուանի՝ հանդերձեալ երթալ ’ ի Հռովմ ’ ի խնդիր թագի, † ’ ի Վենետիկ, (1365, հոկտ.):– Ուրբանոս Ե գրէ առ Հայս (3 ապրիլ, 1363) թագաւորեցուցանել զեղբայր նորա Լեւոն Ե:

---

[255] Զայս անուն եւ զդէպ յիշէ եւ ժամանակագիրն Աւետիք Ամդեցի, այլ կանխէ զժամանակն. զի յութերորդ ամի Բ Կոստանդեայ ասէ (1352) «եղեւ թագաւոր Լեւոն մ’այլ, խոչընդակ Կոստանդեայ, եւ խռովութիւն ոչ սակաւ ընդ միմեանս»: